



ԴԵԲԵՆԻԿ ԵԳԻՍԿՈՊՈՍ

## ԴԱՐՁՅԱԼ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՀԱՆԿԵՐԳԸ

(Պիոս պապի վերջին կոնդակի առթիվ)



որին Սբբություն Հռոմի Սբր-  
բազան Պապը, Պիոս ԺԲ., սեպ-  
տեմբերի 8-ին «Sempernus  
Rex» («Համիտենական Թա-  
գավոր») անվանյալ կոնդակ մը հրատարա-  
կեց Քաղկեդոնի ժողովին 1500-ամյակին  
առթիվ։ Լատին եկեղեցվո պետին սույն  
հովական թուղթը քիչ արձագանք դրավ  
կրոնական և քաղաքական աշխարհի մեջ։  
Ան կպարունակե դարեր շարունակ կրկնվող  
միենույն հանելերգը, թե Հռոմի պապն է  
Քրիստոսի փոխանորդը այս աշխարհի վրա,  
թե Հռոմի Եկեղեցին է ճշմարիտ Կաթողիկե  
եկեղեցին, և թե յուս քրիստոնյա ազգեր,  
եկեղեցական համամֆներ պարուին լատին  
եկեղեցվո հպատակիւ, ըլլալու համար ոմի  
հոտ և մի հովիւա։

Յթե կարգ մը պարբերաթերթերու մեջ  
կոնդակին հիշատակությունը եղավ և քանի  
մը մեջբերունենք կատարվեցան անկե՝ պար-  
ուղապես ցույց տալու համար էր, թե ի՞նչպես  
վատիկան միշտ աշխարհի շփոթ կացութե-  
նեն օգտվելով կշանա տարածել իր գերիշ-  
խանությունը քրիստոնյա մյուս եկեղեցինե-  
րուն վրա, այս պարագային մասնավորա-  
րար արևելյան ուղղափառ եկեղեցիներուն։

Ամբողջական կոնդակը աշքի առջև շու-  
նինք, որովհետև մեր ստացած օտար լեզվով  
պարբերաթերթերն ու օրաթերթերը անկե  
միա՛յն նախադասություններ ու հատվածներ  
արտադրած են։

Պիոս պապի կոնդակի մասին առաջին  
անգամ կարդացինք Նյու-Յորք Հերոլտ Տրի-  
բյուլի Պարիզի տպագրության 18 սեպ-  
տեմբեր 1951-ի թիվին մեջ։ Թղթակիցը՝  
Պարրը Մկրյուն, «Պապի հրավերը միության

համարը խորագրին ներքև կդրե, թե Լատին  
եկեղեցվո Քահանայապետին կոչը ուղղված  
է մասնավորաբար արևելյան քրիստոնյա  
եկեղեցիներուն — Հայ, Ղպտի, Ասորի և Նես-  
տորական — զանոնք հրավիրելու կամ միա-  
նալու կաթոլիկության և պապը ճանշնարու  
իրու գերագույն պետ եկեղեցվո։ Հստ թրդ-  
թակիցին՝ պապը իր կոնդակի մեջ կհայտնի  
թե շերմորեն կփափագի, որ զպտիներն ու  
նեստորականները միացած տեսնե Հռոմեա-  
կան եկեղեցվո մեջ իր մահեն առաջ որպես  
իր քահանայապետության ոմեծ գոհարնե-  
րուն մին։ Պարրը Մկրյուն կավելցնե նաև,  
որ Հռոմի Հեղինակավոր շրջանակներու մեջ  
կտիրե այն կարծիքը, թե զպտիներեն և նես-  
տորականներեն ետք կաթոլիկության կըր-  
նան միանալ տառերկու միլիոն ուղղափառ  
քրիստոնյաներ Հռոմաստանի, Յովուլավիոն,  
թուրքիոն, Մերձավոր Արևելքի, Ֆրանսայի և  
Միացյալ նահանգաց մեջ։ Շատ պապեր և  
ունեղինակավոր հոռմեադավաններ ունեցեր  
ին այդ կարծիքն ու փափագը, սակայն ուղ-  
ղափառ քրիստոնյաներ ո՞չ թե կմիանան  
Հռոմի, ալ ալ ավելի փարած կմնան իրենց  
սուրբ հավատքին, որմե Արևալուան եկեղե-  
ցին պետք է օրինակ առնե։

Նյու-Յորք Տայմ իր 13 սեպտեմբեր  
1951-ի թիվին մեջ քանի մը երկար հատ-  
վածներ մեջբերած է կոնդակին, որոնք ա-  
վելի Քաղկեդոնի ժողովին մասին են։ Պա-  
պը կշանա ցույց տալ, թե Եփեսոսի և Քաղ-  
կեդոնի ժողովներուն մեջ Քրիստոսի մար-  
դուղության նկատմամբ դավանական միու-  
թյուն գոյացած է և թե Արևելք ընդունած է  
այդ միությունը։ Պետք է ըսկենք, սակայն,  
թե իրողությունը տարբեր է։ Եփեսոսի դա-  
վանանքին տեղ, ըստ որում, մարմնացյալ

Քրիստոսը միավորյալ մի քնություն ունի, Քաղեղոն երկու անգամ քնությանց վարդապետությունը ընդունեցավ և մի Քրիստոսը երկու ժամի բաժնեց, նման նեստորի, և այս կերպով փոխանակ միություն առաջ բերելու, անհամաձայնությանց ու դավանական պայքարներու դուռ բացավէ: Արևելյան եկեղեցիները — Հայ, Ղատի, Ասորի, Հարեշ— իսպառ շընդունեցան Քաղեղոնի այդ վարդապետությունը, որ կուգար խօսմ բերել նախապես բոլոր եկեղեցիներեն դավանված և ավանդական դարձած Քրիստոսի մի քնության վարդապետության մեջ: Սրբազն պապը իր կոնդակին մեջ կգրե: «Այսօր իսկ քանի մը հերձյալ հատվածներ ցրված եղիպտոս, եթովահա Սյուրիհա, Հայաստան և այլուր՝ կթվին մոլորած ըլլալ ճշմարիտ շավիդնեն՝ ավելի բառերով, քան թե հաստատուն փաստերով, քանաձեւելու համար մարդեղության վարդապետությունը ինչպես կհետեցրվի իրենց ծիսական և աստվածաբանական վավերաթուղթերեն (Documēnt): Կուղեինք խոնարհաբար հիշեցնել սրբազն քահանայապետին իրողություն մը, որուն քաշածանոթ է ինք, թե եղիպտոսի (Ղպտի), Եթովպիո (Հարեշ), Սյուրիհ (Ասորի) և Հայաստանի (Հայ) եկեղեցիները «հերձյալ հատվածներ» չեն, այլ Մի, Սուրբ, Առաքելյական Կաթողիկե եկեղեցվու մասը և անոր ճշմարիտ հավատքին շատագովողներն ու պահպանողները, և այդ հավատքին հավատարիմ մնալու համար դարեր շարունակ բազում հալածանք ու զոհաբերություն հանձնն առած են. ասկե զատ այդ եկեղեցիները ո՛չ թե ճշմարիտ շավիդնեն շեղած են, այլ պահած ու քարոզած են զայն. ասիկա կփաստվի ո՛չ թե գրառերով, այլ մեր բազմաթիվ սուրբ հայրերու ծիսական և դավանական վկայություններով: Անզուզտ, արևելյան և արևմտյան եկեղեցիներու պատմաբանները շատ լավ գիտեն, թե դավանական ուղիղ ճամփային շեղողները ո՛չ թե արևելյան եկեղեցիները եղան, այլ արևմտյանը՝ իր նորահնար բարդություններով:

Մեզի համար մասնավորապես զարմանալի թվեցան, սակայն, սրբազն պապի հետևյալ խոսքերը. «Հետևելով մեր նախորդներու հետքիում, մենք հարատեսորեն քանացինք դյուրացնել արևելյան եկեղեցիներու վերադարձը Կաթոլիկ եկեղեցվու մեջ... մասնավոր կերպով՝ հոգածու եղանք հոռմեափան եկեղեցապետության տակ գտնվող ժողովություն (ըսել կուզե՞ հայերուն) և պարզաբացինք հոռմեական կարգինալության փառքով հայոց պատրիարքը»:

Թե համուկներ հինգն ի վեր ի՞նչպիսի

միջոցներ գործածած են ու կգործածեն արեւվելյան եկեղեցիները Հռոմի Հապատակեցնելու՝ ծանոթ է բոլոր անոնց, որոնք թիշ-շատ եկեղեցական պատմություն գիտեն, Բայց Աղաջանյան սրբազնի կարդինալության աստիճանի բարձրացումը կխորհենի թե արժանյաց և ծառայության փոխարեն եղած հատուցում մըն էր, և ոչ թե ցուցամոլական միջոց մը՝ հայերուն վերադարձը (?) դյուրացնելու Հռոմեական եկեղեցվու մեջ. Արդյոք կարդինալ Աղաջանյանի Միացյալ նահանգաց տված այցելությունը այս օրերուն սրբազն պապին կողմէ «հարատևորեն» կատարված ջանքերուն շարունակությունն է Ամերիկայի մեր հայ բեկորները Հռոմի գերիշխանության տակ բերելու համար:

Իսկ Աղաջանյան կարդինալը շայլոց պատրիարք անվանելը Հռոմի քահանայապետին կողմէ բոլորովին անհեթեթ է և պատմության խեղաթյուրում: Արար աշխարհ գիտե, թե հայ ժողովուրդը դարերի ի վեր միայն մեկ պատրիարք՝ այսինքն կաթողիկոս ունեցած է և ունի. ան միայն մեջկողություն և պետ կընդունի, որ է Սուրբ էջմիածինի Սրբազնագույն Հայրապետը. այդ գրեխուն մաս կկազմեն մեր մյուս Աթոռուներու գահակալներն ալ: Հայ ժողովուրդը Սուրբ էջմիածինի կաթողիկոսեն զատ ուրիշ եկեղեցական գլուխ կամ պետ չի ճանշնար:

1945 դեկտեմբերին, երբ Պիոս ԺԲ. պապը Տիֆենսի ժողովի բացման 400-ամյակի առթիվ ևս հրավեր կարրաց բոլոր ոչ-Հռոմեակավաններուն միանալու Հռոմի եկեղեցվու, մենք «ՀԱՍԿԵ» 1946 փետրվարի թիվին մեջ Սիենույն հանկերը վերնագիրով կարճ գրությամբ մը դիտել կուտայինք, թե ո՛Չիության այսպիսի հրավերներ կմնան «Զայն բարբառոյ յանապատի», ցորքան անոնց դիտուն ու նպատակն է կատին եկեղեցվու գերագահությունը ապահովել և անոր հեղինակությունը ամենուրեք տարածել... դարերու միենուցն հանկերն է դարձյալ: Մի զարմանաք, եթե նույնանման հանկերներ և հրավերներ իրմե ստորադայալներն ալ շուտով իմանաք կամ ստանաք»:

Նույն այս դիտողությունը այս առթիվ ևս կուզեինք կրկնել:

Ներկա համաշխարհային տագնապին մեջ ժողովուրդներ կուզեն սիրու և խաղաղության պատգամը: Անոնք կարուտ են հոգածոր և բարոյական առաջանորդության և ոչ թե եսուկու, այսինքն՝ հռոմե ցուցամունության, ինչպես այնքան ճշմարտորեն Christian սենյակ անկախ շաբաթերթը ուժեղ խօսմագրականով մը (տե՛ս սեպտեմբեր 28, 1951 թիվը) կորավեր պապին կողը և նաև

այդ կոշին կցված պատմական խեղաթյուրությունները:

Ոգիի և գործոննեռվյան ի՞նչ հավագրություն: 451. Թիվին, Հոռմի կոն Ա. պապը քաղաքական նպատակներով կնկությունությունը և Աղեքսանդրիո պատրիարքական աթոռները անշրացնել՝ իր տիությունը տարածելու համար Արեւելքի եկեղեցիներուն վրա, մինչ հայեր՝ Վարդանանք և Ղեռնդյանք, նույն այդ տարին իրենց Մայրենի եկեղեցվո համար կմարտինչեին իրենցմե շատ ավելի հզոր թշնամիի մը դեմ հանոնքի և խիզճի ազատության և Հայրենիքի նվիրականության պաշտպանության: Այս հակադրությունը երկու եղելությանց մեջ, որոնց 1500-ամյակն է հավասարապես այս տարի, ցուց կուտադրերու ընթացքին և մեր օրերուն Հայ և Խափին եկեղեցիներու գործոննեռության ուղիներու տարբերությունը:

Ինչպես ասկե առաջ նորին Վսեմություն: Կարդինալ Աղաջանյան, այս անգամ ալ նորին Սրբություն Պիոս ԺԲ. պապը կիսուին իշտարս արեւելքան կարգ մը եկեղեցիներու Հաւասարանյաց եկեղեցվո ալ վերադրձին թրիստոնյա Ընդհանրական եկեղեցիներու միությամբ: Այդ միության վերակազմությունը ա'յն ատեն միայն կարելի է, երբ առանց գերազանցության խնդիր դնելու բոլորը կմիանան թրիստոնեական ոգիով իրը հավասարապես անդամները թրիստոնի միակ մարմնուցն, որուն գլուխն ալ նույնինը թրիստոնն է, բացի որմե ոչ ոք եղած է և կարող է երբեք ըլլալ:

Կան Թրիստոնյա եկեղեցինեն, որպեսզի հարկ ըլլա իրեն հոն վերադրանալ: Թաղեկեդոնիկ վեճերուն հետևանքով գործնականապես դադրեցավ բոլոր եկեղեցիներու միությունը, որ գոյություն ունեցած էր մինչև այս ատեն: Եթե միութենեն հեռացած եղավ ձարոց եկեղեցին, նույն միութենեն հավասարապես հեռացած եղավ նաև ինքը, Հոռմեական եկեղեցին, հետեւարը, եթե միություն գործնապես վերակազմելու հարց կա, որքան Հայաստանյաց եկեղեցին, նույնքան ևս մյուսները, ընդ որս Հոռմեականը, պարտին վերադրանալ միության մեջ: Թայց Հոռմեական եկեղեցին հավակնությունը ունի ինքունը նկատելու միակ ընդհանրականը, և ով չի պատկանիր իրեն՝ հերձվածող հոչակելու: Այն կհրավիրե ասոնց վերատին զալիւններն իրեն, որուն երբեք մաս չէին կազմած, սակայն, այդ եկեղեցիները, անոնքի իրեն նեա մաս կազմած էին բոլոր եկեղեցիներու միությամբ: Այդ միության վերակազմությունը ա'յն ատեն միայն կարելի է, երբ առանց գերազանցության խնդիր դնելու բոլորը կմիանան թրիստոնեական ոգիով իրը հավասարապես անդամները թրիստոնի միակ մարմնուցն, որուն գլուխն ալ նույնինը թրիստոնն է, բացի որմե ոչ ոք եղած է և կարող է երբեք ըլլալ:

